



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1692-Ա/2

«26» նոյեմբերի, 2020 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 847-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՆ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 11-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 21-ի N 1077-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի նիստի N 2 արձանագրությունը և ելնելով 2020 թվականի բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հուլիսի 2-ի N 847-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված

գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ՝ Սարգիս Հայրոսյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 847-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՆ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Գիտական թեմաների անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	20TTWS-1D009	Կենսաբանորեն ակտիվ հիդրօքսի- և պիպերազինոպիրիդինների հիբրիդային միացությունների սինթեզը և հատկությունները	Հովակիմյան Անուշ Աշոտի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
2	20TTWS-1C010	Հարկադրական նանո-օպտո-էլեկտրոնիկական ոչ գծային երևույթներ գրաֆենանանան նյութերում	Ղազարյան Արմենուհի Գևորգի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3	20TTWS-1D012	Պոտենցիալ հակախոլինէրազային ակտիվությամբ օժտված ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների նպատակային սինթեզ և կենսաակտիվության ներուժի գնահատում	Դադայան Անի Սլավիկի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
4	20TTWS-1C014	InP-միջուկով կոլոիդային քվանտային կետերում ֆոնոնների մասնակցությամբ էքսիտոնի կազմավորման և վերամիավորման տեսական ուսումնասիրություն	Ասատրյան Աննա Լյուդվիկի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
5	20TTWS-1F017	Հայաստանի սոճուտների վնասատու միջատների ֆաունայի արդի վիճակը. տեսակային կազմը, վնասակարության գնահատումը և պայքարի հնարավոր եղանակները	Կարազյան Գայանե Հարությունի	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ

6	20TTWS-1F023	Նոր մշակաբույս Հայաստանում - Moringa oleifera և դրա կենսադեղաքիմիական հատկությունների ուսումնասիրումը Արարատյան դաշտի հողային և հիդրոպոնիկ պայմաններում	Հակոբջանյան Անահիտ Արմենի	ՀՀ ԳԱԱ «Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
7	20TTWS-1C026	Որոշ ամինոթթուների աղերի հեռանկարային միաբյուրեղների համակարգված որոնումը, ուսումնասիրումն ու աճեցումը	Սուքիասյան Ռուզան Պողոսի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
8	20TTWS-1F031	Հայաստանի չղջիկները որպես բակտերիալ և վիրուսային հիվանդությունների ռեզերվուարներ	Ղազարյան Աստղիկ Սամվելի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
9	20TTWS-1D032	Պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ պիրիդինի նոր ածանցյալների սինթեզը, վերախմբավորման ռեակցիաները և մոլեկուլային մոդելավորումը	Դաշյան Շուշանիկ Շամիրի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
10	20TTWS-1C035	Բետեի հանրահաշվական անզացը ընդհանրացված ներկայացումների վրա և կոնֆորմ դաշտի տեսությունների մինիմալ մոդելներ	Խաչատրյան Շահանե Ալբերտի	«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
11	20TTWS-2F040	Բարձր-էնտրոպիական օքսիդների ստացում այրման սինթեզով և էլեկտրակայծային կոմպակտավորում մագնիսական և էլեկտրաքիմիական կիրառությունների համար	Այդինյան Սոֆիյա Վարդգեսի	ՀՀ ԳԱԱ «Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
12	20TTWS-4A042	Հայաստանում Toxoplasma gondii-ի տարածվածության և գենետիկական բազմազանության ուսումնասիրություն և որոշ քարաքոսերի հակատրոստակազմային ակտիվության որոշում	Գևորգյան Հասմիկ Շավարշի	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
13	20TTWS-1F044	Հայաստանի ջրավազանային կառավարման տարածքների էկոլոգիական վիճակի բազմաբաղադրիչ գնահատման մեթոդաբանության մշակում	Դալլաքյան Մարինե Ռուսլանի	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ

14	20TTWS-3B046	Սրտի խոռոչների վերաձևավորման ընթացքը, առանձնահատկությունները միջին և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ տարեցների մոտ	Թունյան Լուսինե Գերասիմի	ՀՀ ԵՔ «Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
15	20TTWS-1D049	Կենսաբանորեն ակտիվ միացությունների ինքնության և մաքրության վերլուծության նոր ՄՄՌ սպեկտրոսկոպիկ մեթոդների մշակում	Շահխաթունի Աստղիկ Ալեքսանի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ